14536

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 14

21.10. 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ի դեմս ՀԿ-ի ծրագրերը համակարգող՝ Պետրոս Պետրոսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը՝ գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը՝ «Երիտասարդների հզորացում՝ հանուն Ստեփանավանում լավ տեղական ինքնակառավարման» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2 699 040 (երկու միլիոն վեց հարյուր իննսունինը հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-

ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն՝ իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն է, իսկ հաշվետվությունների ընդունման ժամկետը՝ մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
Էլ. փոստ՝ kamqlori@gmail.com
բանկ ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
մ/ճ հասցե՝ ք.Ստեփանավան,Սոս Սարգսյան 26
Հ/Հ 2471401976060000, ՀՎՀՀ06950266
Կատարողի ստորագրությունը
ՀԿ –ի ծրագրերը համակարգող՝
Պետրոս Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
2021թ. նոյեմբերի 21-ին
կնքված N ԵՔ-ԴՄ-14 պայմանագրի

«Երիտասարդների հզորացում՝
հանուն Ստեփանավանում լավ տեղական ինքնակառավարման»
դրամաշնորհային ծրագրի
Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Առաջիկայում՝ 2021թ. Նոյեմբեր ամսին ՏԻՄ ընտրություններ են անցկացվելու Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքում: Ընդ որում, ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո Ստեփանավանում ՏԻՄ ընտրություններն առաջին անգամ են անցկացվելու նոր՝ համամասնական ընտրակարգով: «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն նոր ընտրակարգի և տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության կարգի վերաբերյալ հարցումներ է իրականացրել համայնքի երիտասարդության շրջանում (մասնավորապես՝ Ստեփանավանում գործող մեկ բարձրագույն և մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև համայնքի չորս բնակավայրերի մարդաշատ վայրերում՝ 16-30 տարեկան երիտասարդների շրջանում): Հարցվողների 68%-ը տեղյակ չէ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության նոր կարգից, 52%-ը մտածում է մասնակցել տեղական ինքնակառավարման ընտրություններին, սակայն մտավախություն ունի, որ դրանք արդար չեն անցնի, 40%-ը չի հավատում, որ իրենք կարող են մասնակցություն ունենալ համայնքային զարգացումներին, 53%-ը տեղյակ չէ, որ որպես քաղաքացի իրավունք ունի մասնակցել համայնքում որոշումների կայացմանը: Հարցվողներից շատերի կարծիքով համայնքի կառավարումը և զարգացումը իրենց կողմից ընտրված ՏԻՄ-երի, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի գործն է: Դիտարկումները ցույց են տալիս, որ համայնքում ցածր է նաև երիտասարդների ներգրավվածությունը ներկայումս գործող ավագանու կազմում. ավագանու 11 անդամներից ոչ մեկը երիտասարդ չէ (մինչև 30 տարեկան), ամենից երիտասարդ անդամը՝ 38 տարեկան է (1983թ.): Համայնքում ներկայումս չկա նաև համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհուրդ, այն դեպքում, երբ 2014-16թ.թ. Ստեփանավանում գործել է համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երտասարդական խորհուրդ, նպաստել Ստեփանավանը ՀՀ երիտասարդական մայրաքաղաք դարձնելու գործում, որը սակայն ներկայումս լուծարվել է: Վերոնշյալ դիտարկումները թույլ են տալիս եզրահանգել, որ երիտասարդությունը չի մասնակցում տեղական մակարդակում որոշումների կայացմանը՝ թեև «Տեղական ինքնակառավման մասին» ՀՀ օրենքը սահմանում է համայնքի՝ 16 տարին լրացած բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման գործընթացին: Իրավիճակը բացատրվում է ինչպես կարծրատիպերի առկայությամբ (օրինակ՝ «ես ինչ գործ ունեմ խառնվեմ», «վատամարդ կլինեմ», «իրենց գործն է, ինչ ուզում են, թող անեն»...) այնպես էլ՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու վերաբերյալ իրենց իրավունքներից իրազեկ չլինելու և ցածր մոտիվացիայի պատճառով: Խնդիրն ավելի է խորացել վերջին շրջանում՝ պայմանավորված COVID-19 համավարակով և հայ-ադրբեջանական պատերազմով: Մարդիկ (հատկապես պատերազմական գործողություններին մասնակցած երիտասարդները և նրանց հարազատները, պատերազմի պատճառով Արցախից տարհանված և համայնքի տարբեր բնակավայրերում ապաստանած երիտասարդները...) դարձել են ավելի անտարբեր տեղական մակարդակում կայացվող որոշումների հանդեպ, նկատելի է

պասիվություն՝ համայնքում որոշումների կայացմանը, համայնքային զարգացման ծրագրերին, համայնքի կարիքների գնահատման գործընթացներին մասնակցելու, տեղական ինքնակառավարման մարմնի գործունեությունը վերահսկելու տեսանկյունից: Այնինչ հակառակ դիրքորոշումը՝ հանրության, մասնավորապես՝ երիտասարդության մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացմանը, կարող է նպաստել պատերազմի և համավարակի հետևանքով համայնքում առաջացած ճգնաժամային իրավիճակի հաղթահարմանը/մեղմացմանը, երիտասարդական ներուժի միջոցով համայնքային տարբեր խնդիրների լուծմանը, քանզի երիտասարդությունը մշտապես համարվել է հասարակության շարժիչ ուժը: Ուստի կարիք կա երիտասարդներին պասիվ վիճակից դուրս բերելու և տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում ակտիվորեն ընդգրկելու: Հաշվի առնելով այս ամենը՝ «ԿԱՄՔ» ՀԿ-ն հանդես է գալիս «Երիտասարդների հզորացում՝ հանուն Ստեփանավանում լավ տեղական ինքնակառավարման» ծրագրի առաջարկությամբ, որը կնպաստի շահառու համայնքում՝

Բնակիչների, հատկապես երիտասարդների շրջանում ՏԻՄ օրենսդրության, ՏԻՄ ընտրությունների նոր կարգի, տեղական ինքնակառավարման և մասնակցային կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,

Առաջիկա ՏԻՄ ընտրություններին երիտասարդների ակտիվ մասնակցությանը, նաև առաջադրմանը որպես ավագանու թեկնածուներ,

Առկա կարծրատիպերի հաղթահարմանը,

Շահառու համայնքում համայնքային խնդիրների բացահայտմանը, բարձրաձայնմանը և լուծմանը, հանրային-քաղաքացիական նախաձեռնությունների իրականացմանը:

#Շահառու համայնքի տարբեր բնակավայրերի երիտասարդների միջև գործընկերային կապերի ձևավորմանը, նրանց ակտիվ համագործակցությանը, միջհամայնքային տարբեր նախաձեռնությունների իրականացմանը:

Համայնքում ակտիվ երիտասարդական խմբի և համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհրդի կազմավորմանը,

ՏԻՄ-երիտասարդություն-համայնքի բնակչություն հաղորդակցման որակի բարելավմանը,

Շահառու համայնքի բնակավայրերում քաղաքացիական լրագրության և այլընտրանքային ԶԼՄ-ների զարգացմանը, ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության և վերահսկողության մակարդակի բարձրացմանը:

Կազմակերպության փորձառությունը

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն համայնքային-քաղաքացիական նախաձեռնությունից հասարակական կազմակերպության է վերածվել 2015թ. մայիսի 12-ին՝ ստանալով պետական գրանցում: Մինչ այդ նախաձեռնության անդամների ջանքերով կյանքի է կոչվել «Դարձնենք Ստեփանավանը երիտասարդական մայրաքաղաք» նախաձեռնությունը, որի արդյունքում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթում հաղթող է ճանաչվել Լոռու մարզի Ստեփանավան քաղաքը: 2015թ. ընթացքում «ԿԱՄՔ» ՀԿ-ն ընդգրկված է եղել **«Ստեփանավանը տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրով** նախատեսված գրեթե բոլոր միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում՝ տարեվերջին

արժանանալով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի և Ստեփանավանի քաղաքապետի պատվոգրերին, նախարարության կողմից ճանաչվել 2015թ. լավագույն նորաստեղծ երիտասարդական հասարակական կազմակերպություն:

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» **ՀԿ-ի առաքելությունն է՝** նպաստել երիտասարդների դերի բարձացմանը, նրանց ներգրավմանը երկրկի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային ոլորտներում: ***Կազմակերպության գործունեության կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են՝***

օժանդակել ՀՀ-ում համամարդկային արժեքների տարածմանը՝ մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարության ամրապնդմանը և սեռային իրավահավասարության խնդիրների լուծմանը,

- ✓ նպաստել կոնֆլիկիտների լուծմանը և խաղաղության կառուցմանը,
- ✓ նպաստել հանդուրժողականության մթնոլորտի տարածմանը, հանրապետությունում և ամբողջ աշխարհում,
- ✓ համագործակցել ազգային փոքրամասնությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ,
- ✓ նպաստել, ինչպես նաև գործուն մասնակցություն ցուցաբերել ՀՀ հասարակական կյանքին,
- ✓ նպաստել ՀՀ երիտասարդության առջև ծառացած խնդիրների լուծմանը և իրավագիտակցության բարձրացմանը,
- ✓ նպաստել երիտասարդության զբաղվածության, փոքր և միջին ձեռնարկատիրության զար•ացմանը,
- ✓ նպաստել առողջ ապրելակերպի, վերարտադրողական առողջությանը նվիրված ծրագրերին,
- ✓ նպաստել երիտասարության մշակութային կյանքի մասնակցությանն ու զարգացմանը,
- ✓ խթանել կամավորական աշխատանքի կայացմանը,
- ✓ նպաստել խոսքի ազատությանը և երիտասարդների ներգրավմանը լրատվական գործունեության մեջ,
- ✓ նպաստել մեդիա ակումբների զարգացմանը,
- ✓ մշակել և իրականացնել կանանց և երեխաների, երիտասարդների և սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում ծրագրեր և միջոցառումներ:
- ✓ իրականացնել երիտասարդների հայրենասիրական, հոգևոր և ֆիզիկական դաստիարակությանն ուղղված ծրագրեր,

✓ կազմակերպել և իրականացնել իրավական, սոցիալական, գիտական, կրթական, հայրենասիրական, մշակութային, տեղեկատվական, հետազոտական, խորհրդատվական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրեր ու միջոցառումներ:

✓ Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ՝ ՀՀ

տարբեր համայնքներում իրականացնելով տարաբնույթ ծրագրեր՝ ուղղված երիտասարդների դերի բարձրացմանը, զբաղվածության խնդրի մեղմացմանը, երիտասարդների ակտիվ մասնակցությանը համայնքային կյանքին ու տեղական ինքնակառավարմանը, երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային գործընթացներին: «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն»-ի իրականացված ծրագրերին կարող եք ծանոթանալ ՀԿ-ի բլոգում՝ https://kamqngo.blogspot.com/ և ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/KAMQNGO :

✓ Առաջարկվող ծրագիրը համապատասխանում է ՀԿ-ի առաքելությանը և ՀԿ-ի համար ունի ռազմավարական նշանակություն: Տեղական ինքնակառավարման, մասնակցային կառավարման ոլորտում ՀԿ-ն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնից առանձնացնենք մի քանիսը՝

«Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» ծրագիրն իրականացվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, 2 հոկտեմբերի 2017թ.-31 հունվարի 2018թ. **«Համայնքների ֆինանսիստների միավորում» և ԱՄՆ ՄԶԳ** կողմից իրականավող «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակում: **Բյուջեն**՝ 2.977.100 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ: **Ծրագրի նպատակն էր՝** խթանել Փարաքար համայնքում մասնակցային կառավարումը՝ համայնքի բնակիչների, հատկապես՝ երիտասարդների շրջանում մասնակցային կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման, նրանց կողմից համայնքային խնդիրների բարձրաձայնման և հանրային նախաձեռնությունների իրականացման միջոցով: **Ծրագրի արդյունքում** բացահայտվել և համախմբվել է Փարաքար համայնքի ակտիվ երիտասարդական ներուժը, որոնց համար անց է կացվել ՏԻՄ լիազորությունների ու տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների վերաբերյալ կարողությունների զարգացման դասընթացներ, որին մասնակցել են 20 երիտասարդներ: Համայնքի դպրոցներում, կրթամշակութային հաստատություններում անց է կացվել «Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» խորագրով նկարների և շարադրությունների մրցույթ՝ նպատակ ունենալով դեռ դպրոցական տարիքից սերմանել համայնքի կառավարմանը մասնակցելու գաղափարը:Կազմակերպվել է մեկ հանրային քննարկում համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև (շուրջ 200 մասնակից), ստեղծվել համայնքային խնդիրների պատ, որի վրա բնակիչները գրի են առել համայնքում առկա խնդիրները, ապա միասին որոշել ամենից առաջնային լուծում պահանջող խնդիրը՝ այն է համայնքի աղբահանության խնդրի լուծումը: Աղբահանության խնդրի լուծման նպատակով ծրագրի շրջանակում կազմավորված ակտիվ երիտասարդական խմբի ջանքերով Փարաքարում կազմակերպվել է համայնքային քաղաքացիական նախաձեռնություն, իրականացվել ստորագրահավաք համայնքի բնակիչներից, և երիտասարդները հարցը ներկայացրել են համայնքի ավագանու նիստի օրակարգում: Հարցը ստացել է դրական լուծում, Փարաքարում խտացվել է աղբահանության գրաֆիկը, տեղադրվել են նոր աղբամաններ, այդ թվում՝ տեսակավորված աղբի համար նախատեսված, ինչը խթան է հանդիսացել, որ ծրագրի ավարտից հետո շահառու երիտասարդները հիմնեն սոցիալական ձեռնարկատիրություն և սկսեն զբաղվել պլաստիկին «երկրորդ կյանք» պարգևելով: Ծրագրի շրջանակում շահառուների մասնակցությամբ պատրաստվել է

նաև «Ինչու և ինչպես մասնակցել համայնքի կառավարմանը» խորագրով սոցիալական տեսահոլովակ: Հոլովակի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=hE9ty0jyGkY&t=457s

Երկիր մեդիա հեռուստաընկերության անդրադարձը ծրագրին՝

https://www.youtube.com/watch?v=4FlsB1lhDtI&t=2s

«Երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը նոր մեդիայի միջոցով» ծրագիրն իրականացվել է ՀՀ 2017թ. տարվա երիտասարդական մայրաքաղաք **Չարենցավանում՝10.04.2017թ.-10.06.2017թ.** ընկած ժամանկահատվածում **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության** կողմից հատկացված դրամաշնորհի աջակցությամբ, որի **բյուջեն կազմել է 1994250** (մեկ միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: **Ծրագրի նպատակն էր՝** նպաստել չարենցավանցի 25 երիտասարդի անհատական և սոցիալական զարգացմանը, մասնակցային կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և նոր մեդիայի վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ փոխանցելու միջոցով նրանց ներգրավվածությանը համայնքային կյանքին ու տեղական ինքնակառավարմանը: Ծրագրի շրջանակում անցկացված դասընթացների **արդյունքում** չարենցավանցի 25 երիտասարդ ձեռք է բերել քաղաքացիական լրագրողի հմտություններ, սովորել բացել և վարել բլոգ, իրազեկվել ՏԻՄ գործառույթների և տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության իրավունքի և կարգի վերաբերյալ: Ծրագրի արդյունքում շահառուների և Չարենցավանի ՏԻՄ-երի միջև ստեղծվել է երկխոսության հարթակ, շահառու երիտասարդները հանդիպել և հարցազրույցներ են վարել ՏԻՄ-երի հետ համայնքային խնդիրների վերաբերյալ, քննարկել դրանց լուծման ուղիները, ապա ծրագրի արդյունքում բացված մեդիա բլոգներում հանրայնացրել դրանք, լուսաբանել համայնքային կյանքն ու խնդիրները: Բլոգներից մի քանիսը ցայսօր շարունակում են իրենց գործունեությունը:

Քանի որ երիտասարդների նախաձեռնողականությանը և տեղական մակարդակում որոշումների կայացմանը միտված ծրագրերը ՀԿ-ի համար ունեն ռազմավարական նշանակություն, կազմակերպությունը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ նման ծրագրեր իրականացրել է նաև ՀՀ երիտասարդական մյուս մայրաքաղաքներում՝ նպաստելով թիրախ համայնքներում երիտասարդների ակտիվությանը, ակտիվ ներգրավմանը համայնքային կյանքին և որոշումների կայացման գործընթացներին: Այդ ծրագրերն են՝

«Գյումրեցի երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը նոր մեդիայի միջոցով» ծրագիր, 2016թ., **Գյումրի**, դրամաշնորհի բյուջեն՝ 1.999.250 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=6sbg4FkNRq8&t=4s

«Մեդիա մասնակցություն» ծրագիր, 2018թ.**Իջևան,** դրամաշնորհի բյուջեն՝1.998.250 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=mGZ4kzcJcWc&t=917s

«Մեդիան համայնքի մասնակցային կառավարման միջոց» ծրագիր, 2019թ., **Վանաձոր**, բյուջեն, 1.998.350 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունութ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=2SWLCtDQjH4&t=3s

Կազմակերպության՝ ռազմավարական փաստաթղթերի մշակման փորձը

Բացի մասնակցային կառավարման և թափանցիկության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման փորձից, «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ-ն՝ ի դեմս կազմակերպության նախագահ Նազիկ/Նազելի Ավագյանի, ունի նաև ռազմավարական փաստաթղթերի մշակման փորձառություն: Նազիկ Ավագյանը երկու անգամ անմիջական մասնակցություն է ունեցել Ստեփանավան համայնքի քառամյա և հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև Լոռու մարզի 2017-2025 զարգացման ռազմավարության, Հարկ է նաև նշել, որ Նազիկ Ավագյանն ութ տարի աշխատել է Ստեփանավանի քաղաքապետարանում՝ որպես լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի ղեկավար, և ՏԻՄ-ի թափանցիկության գործառույթների իրականացման ոլորտում ունի բավականին հարուստ փորձ: Ծրագրի ՏԻՄ փորձագետ Արշավիր Ղուկասյանը ոլորտի ամենահայտնի փորձագետներից է, ունի ավելի քան 20 տարվա տեղական և միջազգային փորձ, համայնքային ծառայողների վերապատրաստող մասնագետ է, «Մասնակցային կառավարում» և մի շարք այլ ձեռնարկների համահեղինակ:

«ԿԱՄՔ» ՀԿ-ն մասնակցել է նաև ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությանը, որն անց է կացվել «ՀԱՄԱՏԵՂ» ծրագրի շրջանակում: ՀԿ-ն իրականացրել է Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի համայնքների կարիքի գնահատում և խոշորացման առաջարկի մշակում: Ծրագիրն իրականացվել է «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ) առաջնորդությամբ 6 կազմակերպություններից բաղկացած համընկերության կողմից (որոնցից մեկը «ԿԱՄՔ» ՀԿ-ն էր)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է խթանել Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքում երիտասարդների ակտիվ և իրազեկ մասնակցությանը ՏԻՄ ընտրություններին, ապա և տեղական ինքնակառավարմանն ու որոշումների կայացմանը՝ շահառու երիտասարդների շրջանում առաջնորդության հմտությունների, տեղական ինքնակառավարմանը մասնակցելու կարողությունների զարգացման, համայնքային երիտասարդական ակտիվ խմբի և համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհրդի կազմավորման, համայնքային խնդիրների բարձրաձայնման և համայնքային նախաձեռնությունների իրականացման միջոցով:

Ծրագիրը նպատակ ունի նաև զարգացնել շահառու երիտասարդների քաղաքացիական լրագրության կարողությունները և համայնքի բոլոր բնակավայրերում այլընտրանքային ԶԼՄ-ների զարգացման միջոցով նպաստել տեղական ինքնակառավարման թափանցիկությանը, քաղաքացիական վերահսկողությանը, ՏԻՄ-համայնքի բնակչություն հաղորդակցման որակի բարելավմանը:

Ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված խնդիրներն են՝

1. **Ծրագրի 25 շահառուների համար կազմակերպել կարողությունների զարգացման վեցօրյա դասընթացներ՝** փոխանցելով գիտելիքներ ՏԻՄ նոր ընտրակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների, թափանցիկության, վերահսկողության, մասնակցային կառավարման մեխանիզմների, քաղաքացիական լրագրության, նոր մեդիայի և բլոգավարության մասին:

2.**Ստեղծել համայնքային նշանակության առնվազն 4 մեդիա բլոգ ծրագրի թիրախ (բնակավայրերի Ստեփանավան, Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր) համար**, որը կվարեն թիրախային բնակավայրերից ընտրված ծրագրի շահառուները՝ ներկայացնելով իրենց պատրաստած լրագրողական նյութերը համայնքային իրադարձությունների, խնդիրների վերաբերյալ՝ մեդիայի միջոցով վերահսկելով ՏԻՄ-ի գործունեությունը:

3. Խոշորացված համայնքի բնակավայրերից համախմբելով տեղական ինքնակառավարմամբ հետաքրքրված ակտիվ երիտասարդների ներուժը՝ **ստեղծել համայնքային երիտասարդական ակտիվ խումբ և համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհուրդ**:

4. **Երիտասարդական համայնքային խմբին տրամադրել մենթորական աջակցություն՝** համայնքային կարիքները գնահատելու, համայնքային խնդրիների լուծման համար ֆոնդհայթայթում իրականացնելու, համայնքային-քաղաքացիական նախաձեռնություններ կազմակերպելու, համայնքի ավագանու նիստերին առաջարկություններով հանդես գալու համար:

Ծրագրի արդյունքները

Վերոնշյալ խնդիրների իրականացումը կբերի հետևյալ ծրագրային չափելի արդյունքներին՝

1. **Ծրագրի թիրախ համայնքի բոլոր բնակավայրերից ընտրված, վերապատրաստված և իրավագիտակից 25 երիտասարդ**, ովքեր իրազեկ են ՏԻՄ օրենսդրության, ՏԻՄ նոր ընտրակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության, ՏԻՄ-ին հասարակության մասնակցության իրավունքի, մասնակցային կառավարման կարգի վերաբերյալ, զարգացրել են առաջնորդության հմտություններ, կարող են իրականացնել համայնքային նախաձեռնություններ, տիրապետում են ֆոնդհայթայթման սկզբունքներին, ստացել են քաղաքացիական լրագրության հմտություններ՝ կարողանալով պատրաստել մեդիա բովանդակություն (լուր, հոդված, ակնարկ), ճիշտ լուսանկարել, բացել և վարել բլոգ, թղթակցել այլ ԶԼՄ-ների: *(Չափելության ցուցանիշ՝ դասընթացի լուսանկարներ, մասնակիցների գրանցման թերթիկներ, ծրագրի գնահատման թերթիկներ, դասընթացի մասնակիցների թեմայի վերաբերյալ գիտելիքների նախնական և վերջնական գնահատման թերթիկներ):*

2. **Լոռու Ստեփանավան խոշորացված համայնքի բնակավայրերում քաղաքացիական լրագրության և այլընտրանքային ԶԼՄ-ների զարգացում:** *(Չափելության ցուցանիշ՝ ծրագրի արդյունքում բացված մեդիա բլոգների հղումներ, որտեղ երիտասարդները լուսաբանում են համայնքային իրադարձություններն ու խնդիրները: Ծրագրի ավարտին նախատեսվում է ունենալ առնվազն 6 բլոգ, որից 4-ը՝ համայնքային նշանակության, մյուսները նախատեսվում է, որ կբացեն շահառուները՝ ըստ իրենց հետաքրքրությունների: Չափելիության ցուցանիշ է նաև բլոգներում տեղադրված լրագրողական հոդվածների հղումները՝ առնվազն 10 հոդված ծրագրի իրականացման փուլում):*

3. **Ստեփանավան խոշորացված համայնքում կգործի երիտասարդական ակտիվ խումբ՝** ներառելով վերապատրաստված և իրավագիտակից ներկայացուցիչներ ինչպես ծրագրի շահառուներից, այնպես էլ համայնքների բոլոր բնակավայրերից: Երիտասարդական խումբը հետագայում համայնքի ավագանու որոշմամբ կստանա ֆորմալ բնույթ՝ գործելով որպես համայնքի ղեկավարին կից երիտասարդական-հասարակական խորհուրդ: Ըստ նախանական պայմանավորվածության՝ համայնքի ղեկավարը համայնքային ենթակայության շենք-շինություններից տարածք կհատկացնի երիտասարդական խորհուրդին աշխատանքները կազմակերպելու համար: *(Չափելության ցուցանիշ՝ ծրագրի արդյունքում ձևավորված երիտասարդական խմբի անդամների ցուցակը՝ ներառյալ կոնտակտային տվյալներ, ինքնակենսագրականներ: Փաստաթղթային փաթեթ՝ ուղղված շահառու համայնքի ՏԻՄ-երին՝ համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդ ստեղծելու առաջարկով, որի կազմում կներառվեն նաև սույն ծրագրի արդյունքում վերապատրաստված շահառու երիտասարդներից):*

4. **Բացահայտված է Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերի երիտասարդներին հուզող համայնքային նշնակության առնվազն 1 առաջնահերթ խնդիր, ներկայացված դրանց լուծման մեխանիզմը համայնքային քաղաքացիական նախաձեռնություն իրականացնելու միջոցով.** *(Չափելության ցուցանիշ՝ բացահայտված համայնքային առաջնահերթ լուծման խնդրի ընտրության արձանագրության քաղվածքը, ընտրված խնդիրի ներկայացում համայնքային-քաղաքացիական նախաձեռնության փաստաթղթային փաթեթում):*

Ծրագրի ազդեցությունը և շարունակականությունը շահառու համայնքում կգնահատվի երկու մակարդակում՝ հասարակական և անհատական:

Անհատական առումով ծրագրի անմիջական մասնակիցը կզարգացնի իր առաջնորդության, ֆոնդհայթայթման, մասնակցային կառավարման ու նախաձեռնություններ իրականացնելու կարողություններ, ձեռք կբերի քաղաքացիական լրագրության և բլոգավարության հմտություններ, կստանա նաև լրագրողի մասնագիտական որոշակի կողմնորոշում, ինչի կնպաստի շահառու երիտասարդների կրթության շարունակականությանը և զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը (նրանք՝ որպես բլոգերներ, քաղաքացիական և ֆոտո լրագրողներ, իրենց պատրաստած նյութերով կարող են համագործակցել տեղական և հանրապետական տարբեր ԶԼՄ-ների հետ՝ կայքեր, թերթեր, բլոգներ): Կբարձրանա նաև շահառուների իրազեկվածության մակարդակը ՏԻՄ ընտրությունների նոր ընտրակարգի վերաբերյալ, հնարավոր է, որ նրանցից ոմանք ցանկություն հայտնեն առաջադրվելու առաջիկա ՏԻՄ ընտրություններին՝ որպես համայնքի ավագանու անդամներ:

Հասարակական առումով անմիջական շահառուներն իրենց գիտելիքներով կկիսվեն այլոց՝ ծրագրի անուղղակի շահառուների հետ, տեղի կունենա ծրագրի արդյունքների բազմապատկում և շղթայական փոխանցում հասարակության լայն շերտերին, ինչն էլ ծրագրի երկարաժամկետ արդյունքում կնպաստի շահառու համայնքում բնակչության, մասնավորապես՝ երիտասարդության ակտիվությանը և մասնակցությանը համայնքային կյանքին, տեղական մակարդակում որոշումների կայացմանը՝ հանգեցնելով Ստեփանավանում ավելի լավ տեղական ինքնակառավարման:

Երիտասարդները սկզբանական շրջանում մենթորության միջոցով, ապա՝ ինքնուրույն կբացահայտեն համայնքային խնդիրներ, կմշակեն առաջարկություններ ուղղված ՏԻՄ-ին, որոնք կընդգրկվեն համայնքի ավագանու նիստերի օրակարգում, համայնքի տարեկան աշխատանքային

պլաններում և զարգացման հնգամյա ծրագրերում: Նրանք իրենց օրինակով կոգեշնչեն համայնքի մյուս բնակիչներին, ովքեր ևս աստիճանաբար կսկսեն մասնակցել համայնքի զարգացման ծրագրերին, տեղական մակարդակում որոշումների կայացմանը: Մյուս կողմից, ծրագրի արդյունքում բացված բլոգների շնորհիվ խոշորացված համայնքի բնակավայրերում կբարձրանա ՏԻՄ-ի գործունեության նկատմամբ հանրության վերահսկողությունը, ՏԻՄ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը: Ծրագիրը հնարավորություն կտա նաև համախմբել Ստեփանավանի տարածաշրջանի երեք խոշորացված համայնքների ակտիվ երիտասարդների ներուժն ու նորարար գաղափարները՝ դրանք նպատակաուղղելով համայնքային խնդիրների լուծմանը: Այն նաև կնպաստի խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերի երիտասարդների միջև ակտիվ համագործակցության հաստատմանը, համատեղ երիտասարդական նախաձեռնությունների ու միջհամայնքային ծրագրերի իրականացմանը:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն սկզբում ներկայացված ձևաչափի .

ԽՆԴԻՐ 1- Ծրագրի 25 շահառուների համար կազմակերպել կարողությունների զարգացման վեցօրյա դասընթացներ

Խնդիր 1-ը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական գործողությունները՝

Գործողություն 1.1. Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրի աշխատակազմի, ծառայություններ և ապրանքներ մատուցող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում:

Գործողություն 1.2. Ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության առցանց հայտադիմումի պատրաստում, տարածում թիրախ համայնքի բնակավայրերում, համացանցում:

Գործողություն 1.3. Դասընթացների նախապատրատական աշխատանքներ՝ կոնֆերանս դահլիճի ձեռքբերում, շահառուների գրենակական պիտույքների փաթեթների ձեռքբերում, մասնակիցների ուղևորափոխադրման, դասընթացների ճաշի և սուրճի ընդմիջումների հետ կապված հարցերի կարգավորում, դասընթացի օրակարգի և ուսումնական նյութերի մշակում, տպագրում:

Գործողություն 1.4. Ծրագրի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում:

Գործողություն 1.5. Դասընթացների առաջին փուլի անցկացում (օֆլայն, 3օր, 8 ժամ տևողությամբ՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ) ՀՀ ՏԻՄ օրենսդրության, ՏԻՄ նոր ընտրակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների գործառունեության և լիազորությունների, թափանցիկության և հաշվետվողականության, տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության կարգի, վերահսկողության մեխանիզմների, համայնքային քաղաքացիական նախաձեռնություններ կազմակերպելու, առաջնորդության և ֆոնդհայթայթման վերաբերյալ կարողությունների զարգացման դասընթաց-վարժանքներ՝ կրթության ֆորմալ և ոչ

ֆորմալ մեթոդների, ուսումնական դերախաղերի, տեսական և գործնական պարապմունքների, համադրմամբ:

Գործողություն 1.6. Դասընթացների երկրորդ փուլի անցկացում (օֆլայն, 3 օր, 8 ժամ տևողությամբ՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ) Քաղաքացիական լրագրության, նոր մեդիայի, բլոգավարության, մեդիա բովանդակություն՝ (լուր, հոդված) պատրաստելու, ճիշտ լուսանկարելու վերաբերյալ կարողությունների զարգացման դասընթաց-վարժանքներ՝ հիմնված ուսուցման ինտերակտիվ մեթոդների, անհատական և թիմային գործնական աշխատարանների վրա, որի արդյունքում շահառուները կկարողանան բացել և վարել բլոգ blogger.com անվճար հարթակում, այնտեղ տեղադրել հոդվածներ, լուսանկարներ՝ լուսաբանելով համայնքային իրադարձություններն ու խնդիրները՝ այդ կերպ խթանելով ՏԻՄ-երի թափանցիկ գործունեությանը:

Գործողություն 1.7. Դասընթացների ամփոփում, գնահատում, մասնակիցների կարողությունների և գիտելիքների գնահատում, դասընթացի թեմաների վերաբերյալ ուսումնական նյութերով բեռնված տեղեկատվական կրիչների և հավաստագրերի հանձնում շահառուներին, նրանց հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում:

ԽՆԴԻՐ 2- Ստեղծել համայնքային նշանակության առնվազն 4 մեդիա բլոգ ծրագրի թիրախ (բնակավայրերի Ստեփանավան, Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր) համար, որը կվարեն ծրագրի շահառուները՝ ներկայացնելով իրենց պատրաստած լրագրողական նյութերը համայնքային իրադարձությունների, խնդիրների վերաբերյալ՝ մեդիայի միջոցով վերահսկելով ՏԻՄ-ի գործունեությունը:

Գործողություն 2.1 Մեդիա դասընթացների ավարտին ծրագրի շահառուները կբացեն համայնքային նշանակության 4 բլոգներ Ստեփանավան, Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի համար, որոնք կառավարելու համար շահառուներից կընտրվեն բլոգների պատասխանատու ադմինիստրատորներ: Նախատեսվում է, որ բացի համայնքային նշանակության չորս մեդիա բլոգներից, շահառուները կբացեն նաև անհատական բլոգներ՝ ըստ իրենց նախասիրությունների:

Գործողություն 2.2. Լրագրողական պրակտիկա. Քաղաքացիական լրագրողի հմտություններ ստացած ծրագրի շահառուների հանդիպումներ կունենան Ստեփանավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ նրանց հետ վարելով լրագրողական հարցազրույցներ համայնքային խնդիրների վերաբերյալ:

Գործողություն 2.3. Գործնական առաջադրանքներ, շահառուները համայնքային խնդիրների և իրադարձությունների վերաբերյալ կպատրաստեն հոդվածներ, որոնք մեդիա փորձագետի կողմից խմբագրվելուց հետո, կտեղադրվեն համայնքային նշանակության բլոգներում, ինչպես նաև կուղարկվեն այլ ԶԼՄ-ների, մասնավորապես՝ «Լոռու մարզ» թերթ, marzer.am, mamul.am կայքեր և այլն: (Նշված ԶԼՄ-ների հետ կան նախնական պայմանավորվածություններ):

Գործողություն 2.4. Դասընթացներն ավարտելուց հետո, ըստ անհրաժեշտության, կանցկացվեն երկշաբաթյա առցանց խորհրդատվություններ՝ շահառուների լրագրողական հմտությունները և բլոգները զարգացնելու նպատակով:

ԽՆԴԻՐ 3 Խոշորացված համայնքի բնակավայրերից համախմբելով տեղական ինքնակառավարմամբ հետաքրքրված ակտիվ երիտասարդների ներուժը՝ ստեղծել համայնքային երիտասարդական ակտիվ խումբ և համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհուրդ:

Գործողություն 3.1. Դասընթացների ավարտին կազմավորել համայնքային երիտասարդական ակտիվ խումբ՝ ներառելով ներկայացուցիչներ համայնքի բոլոր բնակավայրերից. այն երիտասարդները, ովքեր կցանկանան մասնակցել տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին, նախ կներկայացնեն իրենց ապագա գործողությունների և առաջարկությունների փաթեթը, ապա և կընդգրկվեն համայնքային երիտասարդական խմբի կազմում:

Գործողություն 3.2.Գրավոր առաջարկություններով դիմել Ստեփանավան համայնքի ավագանուն և ղեկավարին՝ ստեղծելու համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից ընտրված երիտասարդ ներկայացուցիչներ, որոնց թվում նաև՝ սույն ծրագրի շրջանակում ՏԻՄ-ի գործունեության վերաբերյալ համապատասխան կարողություններ և գիտելիքներ ստացած երիտասարդները՝ կից ներկայացնելով առաջարկի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ մշակված ծրագրի շահառուների և մենթոր-փորձագետների կողմից:

ԽՆԴԻՐ 4. Երիտասարդական համայնքային խմբին տրամադրել մենթորական աջակցություն՝ համայնքային կարիքները գնահատելու, համայնքային խնդրիների լուծման համար ֆոնդհայթայթում իրականացնելու, համայնքային-քաղաքացիական նախաձեռնություններ կազմակերպելու, համայնքի ավագանու նիստերին առաջարկություններով հանդես գալու համար:

Գործողություն 4.1. ՏԻՄ դասընթացների ավարտից հետո համայնքային երիտասարդական խմբին տրամադրել խորհրդատվություն և մենթորական աջակցություն՝ գնահատելու համայնքային կարիքները և վեր հանելու համայնքի երիտասարդների համար առաջնահերթ խնդիրը:

Գործողություն 4.2. Համայնքային երիտասարդական խմբին տրամադրել խորհրդատվություն և մենթորական աջակցություն՝ առաջնահերթ լուծման անհրաժեշտություն ունեցող խնդիրը որպես համայնքային քաղաքացիական նախաձեռնություն ներկայացնելու, օրենքով սահմանված կարգով ստորագրահավաք կազմակերպելու և հարցը համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկելու համար:

Գործողություն 5. Ծրագրի տեսանելիության ապահովում, ծրագրային արդյունքների գնահատում և ամփոփում, հաշվետվությունների պատրաստում:

Գործողություն 5.1. Ծրագրի տեսանելիությունն ապահովելու նպատակով ծրագրի ամբողջ ընթացքը կլսուանկարահանվի և կտեսանկարահանվի և կպատրասվի ծրագրային արդյունքների վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմ: Այն կտեղադրվի համացանցում և կտարածվի ծրագիրն իրականացնող և ֆինանսավորող կազմակերպությունների, գործընկերների, շահառուների, շահագրգիռ այլ կողմերի համացանցային տարբեր հարթակներում, սոցիալական ցանցերում, կտրամադրվի դրամաշնորհատու կազմակերպությանը:

Գործողություն 5.2. Ծրագրի արդյունքների վերաբերյալ տեղեկատվական հոդվածներ կպատրաստվեն և կտեղադրվեն ինչպես ծրագրային բլոգներում, ՀԿ-ի և գործընկերների

համացանցային հարթակներում, այնպես էլ հոդվածները կուղարկվեն տարբեր ԶԼՄ-ների՝ erit.am, marzer.am, mamul.am, newinfo.am և այլ հարթակներում:

Գործողություն 5.3. Ծրագրի արդյունքների ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում դրամաշնորհատու կազմակերպությանը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Հարկ է նշել, որ ծրագրով նախատեսված դասընթացների և հանդիպումների ընթացքում պահպանվելու են ԿՈՎԻԴ-19 համավարակի կանխարգելման և տարածման համար սահմանված բոլոր կանոնները՝ կատարվելու է տարածքի և ներկաների ձեռքերի պարբերաբար ախտահանում, ջերմաչափում, բոլոր ներկաները կրելու են բժշկական դիմակներ, պահպանվելու է մասնակիցների միջև սոցիալական հեռավորությունը:

Ծրագրի արդյունքները պահպանելու, շարունակելու և զարգացնելու համար ծրագրային գործողությունների ավարտից հետո ծրագրի աշխատակազմը և փորձագետները շարունակելու են կապ պահպանել ծրագրի շահառուների հետ՝ ըստ անհրաժեշտության աջակցելով նրանց համայնքային նախաձեռնությունների իրականացմանը և մասնակցությանը՝ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
Ծրագիր՝ «Երիտասարդների հզորացում՝ հանուն Ստեփանավանում լավ տեղական ինքնակառավարման»
Ժամանակահատված՝ 15.10.2021- 10.12.2021թ.թ.

ՀՀ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս		
			1 Հոկտեմբեր	2 Նոյեմբեր	3
1	Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրի աշխատակազմի, մատակարարների հետ պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում	Ծրագրի ղեկավար, հաշվապահ			
2	Ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության հայտադիմումի պատրաստում, տարածում	Ծրագրի համակարգող			

3	Դասընթացների նախապատրաստական աշխատանքներ	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ			
4	Ծրագրի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում	Ծրագրի ղեկավար, համակարգող փորձագետ-ուսուցանողներ			
5	Դասընթացների առաջին փուլ՝ ՏԻՄ դասընթացների անցկացում	ՏԻՄ փորձագետ-ուսուցանող, ծրագրի ղեկավար, համակարգող			
6	Դասընթացների երկրորդ փուլ՝ մեդիա դասընթացների անցկացում	Մեդիա փորձագետ-ուսուցանող, ծրագրի ղեկավար, համակարգող			
7	Դասընթացների ամփում, մասնակիցների գիտելիքների գնահատում, արդյունքների գնահատում, հավաստագրերի և տեղեկատվական կրիչների հանձնում, մասնակիցների հետ հետադարձ կապի ապահովում	Ծրագարի ղեկավար, համակարգող, փորձագետ-ուսուցանողներ			
8	Բլոգների բացում և գործարկում	Մեդիա փորձագետ, շահառուներ, ծրագրի համակարգող			
9	Լրագրողական պրակտիկա, շահառուների հանդիպում ՏԻՄ-ի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների հետ, լրագրողական հարցազրույցների անցկացում	Ծրագրի ղեկավար, մեդիա փորձագետ,			
10	Շահառուների կողմից լրագրողական հոդվածների պատրաստում տեղադրում բլոգներում, այլ կայքերում	Մեդիա փորձագետ, շահառուներ			

11	Բլոգավարության վերաբերյալ առցանց խորհրդատվությունների անցկացում	Մեդիա փորձագետ, ծրագրի համակարգող			
12	Համայնքային երիտասարդական խմբի կազմավորում	Ծրագրի ղեկավար, ՏԻՄ փորձագետ			
13	Համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդ ստեղծելու առաջարկով ՏԻՄ-ին դիմումի ներկայացում	Ծրագրի ղեկավար, ՏԻՄ փորձագետ			
14	Համայնքային երիտասարդական խմբին/համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդին մենթորական աջակցության տրամադրում՝ համայնքային կարիքները գնահատելու և գերակա խնդիրը որոշելու նպատակով, համայնքային քաղաքացիական նախաձեռնություն կազմակերպելու նպատակով	ՏԻՄ փորձագետ, մեդիա փորձագետ, ծրագրի ղեկավար			
15	Ծրագրի վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում	Ծրագրի ղեկավար, տեսանկարահանող ստուդիա			
16	Ծրագրի լուսաբանում	Ծրագրի համակարգող, մեդիա փորձագետ			
17	Ծրագրի ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և հանձնում ՀՀ ԿԳՄՍՆ-ին	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, փորձագետներ			

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագիրն իրականացվելու է Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքում՝ ընդգրկելով խոշորացված համայնքի չորս բնակավայրերը՝ Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր գյուղերը և Ստեփանավան քաղաքը:

<u>Ծրագրի ուղղակի (անմիջական) շահառուներն</u> են լինելու վերոնշյալ բնակավայրերից ընտրված 16-30 տարեկան 25 երիտասարդներ, ովքեր հետաքրքրված են ՏԻՄ

ընտրություններով, ուզում են մասնակցել իրենց համայնքի զարգացմանն ու որոշումների կայացմանը: Մասնակիցների ընտրությունը կատարվելու է առցանց մշակված հայտադիմումների հիման վրա ծրագրի աշխատանքային թիմի կողմից՝ հաշվի առնելով դիմորդների հետաքրքրության համապատասխանելիությունը դասընթացի թեմաների հետ, մասնակցելու շարժառիթը և դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և կարողությունների օգտագործման ուղիները: Մասնակիցների ընտրության հարցում պահպանվելու է սեռային հավասար բաշխումը, խտրականություն՝ ըստ մասնակիցների սեռի, կրոնի, ազգության և այլն, չի դրսևորվելու: Ծրագրի աշխատանքային թիմի կողմից խրախուսվելու է ներքոնշյալ խմբերի երիտասարդների մասնակցությունը ծրագրին՝

- Պատերազմի պատճառով Արցախից տարհանված և Ստեփանավան համայնքի բնակավայրերում ապաստանած երիտասարդներ,
- Մարտական գործողություններին մասնակցած երիտասարդներ,
- Պարտադիր ժամկետային ծառայությունից 2021թ.-ին վերադարձած երիտասարդներ,
- Սահմանափակ հնարավորություններով երիտասարդներ (սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող երիտասարդներ):

<u>Ծրագրի անուղղակի շահառու են</u> Ստեփանավան համայնքի բնակչությունը, քանի որ ծրագրային գործողությունների արդյունքում համայնքի բնակավայրերում բարձրանալու է նոր ընտրակարգի մասին իրազեկվածության մակարդակը, բարձրանալու է մասնակցային կառավարման մակարդակը, բարելավվելու է ՏԻՄ-համայնքի բնակչություն հաղորդակցման որակը, բնակիչները, ի դեմս համայնքի երիտասարդների, կարողանալու են մասնակցել տեղական մակարդակում որոշումների կայացմանը, հանդես գալ առաջարկություններով, մեդիայի միջոցով վերահսկել ՏԻՄ գործունեությունը՝ հանգեցնելով Ստեփանավան համայնքում ավելի լավ տեղական ինքնակառավարման:

<u>Ծրագրի շահագրգիռ կողմերն են՝</u>

Ստեփանավանի համայնքապետարանը, որը «ԿԱՄՔ» ՀԿ-ի հետ հանդիսանում է ծրագիրն իրականացնող և որի հետ ՀԿ-ն սույն ծրագրի իրականացման նպատակով կնքել է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր:

Ծրագրի իրականացման ընթացքում Ստեփանավանի համայնքապետարանը իրեն պատկանող միջոցներից անվճար հատկացնելու է տարածք և տեխնիկական ռեսուրսներ՝ ծրագրով նախատեսված դասընթացների և հանդիպումների արդյունավետ կազմակերպման համար, աջակցելու ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման, շահառուների բացահայտման, ներգրավման և այլ կազմակերպչական հարցերում: Ըստ կողմերի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի՝ համայնքապետարանը պատարաստակամ է աջակցել ծրագրի շահառու երիտասարդների լրագրողական պրակտիկաների կազմակերպմանը, ծրագրի շահառու երիտասարդների՝ համայնքային նախաձեռնությունների իրականացմանը և նրանց առաջարկների ներառմանը համայնքային զարգացման ծրագրերում և ավագանու նիստերի օրակարգում: Համայնքապետարանը աջակցում է նաև համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհրդի կազմավորմանը և արդյունավետ

գործունեությանը՝ խորհրդի գործունեության համար անվճար տրամադրելով աշխատանքային տարածք համայնքային նշանակության շենք-շինություններից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ խորհրդատվություն:

Սույն ծրագրի մեջ համայնքապետարանի ներգրավվածության մասնամասներին կարող եք ծանոթանալ **Ստեփանավանի համայնքապետարանի և ՀԿ-ի միջև կնքված համագործակցության պայմանագրում, որը, ըստ սույն դրամաշնորհային մրցույթի պահանջի, ներկայացված է դրամաշնորհային հայտի փաստաթղթային փաթեթում:*

Ծրագրի շահագրգիռ կողմերից են նաև Լոռու մարզում գործող հասարակական կազմակերպությունները, որոնք կարևորում են երիտասարդների ակտիվ և իրազեկ մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացմանը և ծրագրի իրականացման ընթացքում պատրաստ են կատարել ծրագրի ընդհանուր բյուջեի շուրջ 41%-ի չափով ֆինանսական ներդրում՝ հանդես գալով որպես համաֆինանսավորող:

***Համաֆինանսավորման ենթակա ծախսերը ներկայացված են ծրագրի ֆինանսական նախահաշվում՝ Հավելված 2:*

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման ընթացքում, որպես հնարավոր ռիսկեր, դիտարկում ենք COVID-19 համավարակի հնարավոր սրացմամբ, պատերազմի, երկրաշարժի կամ այլ բնական աղետի պատճառով առաջացած ֆորսմաժորային իրավիճակը և Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրության վերահաստատումը: Նման իրավիճակում ՀԿ-ն կառաջնորդվի ՀՀ-ում արտակարգ կամ ռազմական դրությունների համար պետության կողմից սահմանված իրավական նորմերով՝ անհրաժեշտության դեպքում երկարաձգելով ծրագրի իրականացման տվյալ փուլի ժամկետը՝ առանց աշխատակազմի լրացուցիչ վարձատրության և այլ ֆինանսական ծախսերի:

Կախված ստեղծված իրավիճակից՝ ծրագրի աշխատակազմը կցուցաբերի ճկունություն և արագ արձագանքելով ստեղծված իրադրությանը, կմշակի ծրագրի իրականացման նոր մեթոդաբանություն: Օրինակ, եթե համավարակի հնարավոր սրացմամբ պայմանավորված կրկին արգելվեն մասսայական միջոցառումները ծրագրով նախատեսված դասընթացներն ու հանդիպումներ կանցկացվեն առցանց ձևաչափով:

Նմանատիպ ծախսերը և այլ ռիսկերի կանխարգելման հետ կապված հնարավոր ծախսերը կհոգա ծրագիրն իրականացող կազմակերպությունը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ-ն:

Ծրագրի աշխատակազմը

<u>Ծրագրի հիմնական աշխատակազմ</u>

Պետրոս Հայկի Պետրոսյան- Դերը ծրագրում՝ Ծրագրի ղեկավար

Փորձը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի փոխնախագահն է, եղել է ՀԿ-ի կողմից իրականացված մի շարք ծրագրերի ղեկավարը: Ունի կազմակերպչական մեծ ջիղ,

թիմային աշխատանքի և ծրագրի կառավարման հմտություններ ու անհրաժեշտ փորձ: Պատասխանատու է սույն ծրագրի արդյունավետ իրականացման, ծրագրով նախատեսված գործողությունների համակարգման, ծրագրի ընթացիկ և վերջնական գնահատման, ռիսկերի կառավարման, մոնիթորինգի, ծրագրային արդյունքների ամփոփման համար: *Կից ներկայացվում է Պետրոս Պետրոսյանի ինքնակենսագրականը (CV), համապատասխան հավաստագրեր ու վկայականներ:*

Անի Արմենի Այվազյան- Դերը ծրագրում՝ Ծրագրի համակարգող

Փորձը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի անդամ, տարիներ շարունակ որպես կամավոր ներգրավված է եղել կազմակերպության մի շարք ծրագրերում, որի ընթացքում ձեռք է բերել կազմակերպչական մեծ ջիղ, ծրագրի համակարգողի դերը ստանձնելու համար բավարար փորձ: 2019թ. և 2020թ-ին հաջողությամբ համակարգել է ՀԿ-ի կողմից իրականացված «Մեդիան համայնքի մասնակցային կառավարման միջոց», «Երիտասարդների նախաձեռնողականություն և ծրագրային առաջարկի մշակում», «Ծրագրերի մշակման և կառավարման ամառային դպրոց» ծրագրերը: «ԿԱՄՔ» ՀԿ-ն, ուշադրության կենտրոնում պահելով երիտասարդների զբաղվածության հարցը, կարևորում է իր ակտիվ կամավորների ներգրավումը ծրագրի աշխատակազմում՝ հնարավորություն ընձեռելով ուսանողուհի Անի Այվազյանին ստանձնել սույն ծրագրի համակարգողի/ադմինիստրատիվ օգնականի դերը: Պատասխանատու է սույն ծրագրի ադմինիստրատիվ-կազմակերպչական աշխատանքների, ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման, մասնակիցների հավաքագրման, նրանց հետ կապի ապահովման, ծրագրի ընթացքի հանրայնացման, տեսանելիության ապահովման և դասընթացի իրականացման ընթացքում տարբեր կազմակերպչական հարցերի համար:

Կից ներկայացվում է Անի Այվազյանի ինքնակենսագրականը (CV), համապատասխան հավաստագրեր ու վկայականներ:

Ղուկաս Ղուկասյան- Դերը ծրագրում՝ Ծրագրի հաշվապահ

Փորձը՝ Ունի համապատասխան մասնագիտական կրթություն: Աշխատել է մի շարք պետական, միջազգային ու մասնավոր կազմակերպություններում՝ որպես հաշվապահ և գլխավոր հաշվապահ, եղել «Արդշինբանկ» ՓԲԸ Լոռու մասնաճյուղի, «Առեկսիմբանկ» ՓԲԸ Վանաձորի մասնաճյուղի կառավարիչ, Վանաձորի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետի տեղակալ, իրականացնում է տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի հաշվապահությունը: Մասնակցել է հաշվապահների վերապատրաստման բազմաթիվ դասընթացների: *Պատասխանատու է սույն ծրագրի ընթացիկ հաշվապահության, ծրագրի աշխատակազմի և մատակարարների հետ պայմանագրերի կնքման, գնումների գործընթացի համակարգման, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվության կազմման համար: Կից ներկայացվում է Ղուկաս Ղուկասյանի ինքնակենսագրականը (CV), համապատասխան հավաստագրեր ու վկայականներ:*

<u>Մասնագետներ, փորձագետներ, ուսուցանողներ:</u>

Արշավիր Ղուկասյան- Դերը ծրագրում՝ ՏԻՄ փորձագետ, ուսուցանող:

Փորձը՝ Ունի ծրագրեր մշակելու և կառավարելու, դասընթացներ վարելու ավելի քան 20 տարվա տեղական և միջազգային փորձ: Քաղաքացիական ակտիվության, մասնակցային կառավարման ոլորտի և ՏԻՄ փորձագետ է: Համահեղինակ է «Մասնակցային կառավարում» և մի շարք այլ ձեռնարկների: ՀԿ-ի տարբեր ծրագրերում եղել է քաղաքացիական ակտիվության, ՏԻՄ և

մասնակցային կառավարման, ֆոնդհայթայթման, ծրագրային առաջարկի մշակման դասընթավար: Պատասխանատվությունը սույն ծրագրում՝ ՏԻՄ օրենսդրության, ՏԻՄ-ի նոր ընտարակրգի, տեղական ինքնակառավարման, հանրային մասնակցության, համայնքային նախաձեռնություններ իրականացնելու և ֆոնդհայթայթման վերաբերյալ գիտելիքների և հմտությունների փոխանցում շահառուներին, խորհրդատվություն և մենթորական աջակցություն ծրագրի շահառուներին, համայնքային երիտասարդական խմբերին՝ համայնքային կարիքները գնահատելու, համայնքային քաղաքացիական նախաձեռնություններ իրականացնելու հարցում: *Կից ներկայացվում է Արշավիր Ղուկասյանի ինքնակենսագրականը (CV), համապատասխան հավաստագրեր ու վկայականներ:*

Նազիկ (Նազելի) Ավագյան-Դերը ծրագրում՝ մեդիա փորձագետ, ուսուցանող:

Փորձը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ հիմնադիր-նախագահն է, մի շարք ծրագրերի ղեկավարը: Ունի դասընթացներ վարելու, ծրագրեր մշակելու և կառավարելու շուրջ 10 տարվա փորձ: Եղել է Ստեփանավանի քաղաքապետարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար, աշխատել է «Ֆորտունա» Լոռու մարզային, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում, թղթակցել տարբեր ԶԼՄ-ների՝ կայքեր, թերթեր: Ներկայումս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հանրային կապերի ղեկավարն է: Պատասխանատվությունը սույն ծրագրում՝ քաղաքացիական լրագրության, նոր մեդիայի, մեդիա բովանդակություն պատրաստելու, ճիշտ լուսանկարելու, բլոգ բացելու և վարելու վերաբերյալ գիտելիքների և հմտությունների փոխանցում շահառուներին, բլոգավարության խորհրդատվություն, շահառուների՝ ՏԻՄ ներկայացուցիչների հետ հարցազրույցների անցկացման համակարգում, շահառուների պատրաստած հոդվածների խմբագրում, ԶԼՄ-ների հետ համագործակցության ապահովում, աջակցություն ծրագրի տեսանելիության ապահովման հարցում: *Կից ներկայացվում է Նազիկ (Նազելի) Ավագյանի ինքնակենսագրականը (CV), համապատասխան հավաստագրեր ու վկայականներ:*

Ծրագրի մեկնարկը՝ 2021թ. հոկտեմբերի 15-ին, ավարտը՝ 2021թ. դեկտեմբերի 15-ին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի						
	Անվա-նումը	Բովանդակությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործա-ռույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոց առման իրակա նացմ ան վերջն աժամ կետը	Հաշվետվությ ան ներկայացմա ն կարգն ու ժամկետը	պահանջվ ող գումարը (դրամ)
1	Ծրագրի նախապատրաստում:	Ծրագրի նախապատրաստումը կմեկնարկի հոկտեմբերի 5-ին և կտևի մինչև հոկտեմբերի 20-ը, որի ընթացքում կիրականացվեն մի շարք գործողություններ՝ ծրագրով նախատեսված գործողություններն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար: *ՀՀ օրենսդրությանը համապատասխան կկազմակերպվի ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացը, կնքվեն պայմանագրեր մատակարարների ծրագրի աշխատակազմի հետ: Կմշակվի ծրագրի լոգոն, կտարածվի ծրագրի մասին տեղեկատվություն, կիրականացվի մասնակիցների հավաքագրում, ընտրություն,*	1. Պայմանագրերի կնքում ծրագրի աշխատակազմի հետ: 2. Ծրագրի լոգոյի մշակում, դասընթացի դիմում հայտերի պատրաստում և ծրագրի մասին տեղեկատվության տարածում: 3. Դասընթացի անցկացման տարածքի, ուղևորափոխա-դրման, ճաշի և սուրճի ընդմիջման, գրենական պիտույքների ձեռքբերման հարցերի կարգավորում: 4. Ծրագրի աշխատակազմի և դասընթացավարների հանդիպում:	1. Կնքված 5 պայմանագիր ծրագրի աշխատակազմի 3 աշխատակիցների և 2 դասընթացավարների հետ: 2. Ծրագրի բնույթին համապատասխան լոգոյի առկայություն, դասընթացի դիմում հայտի հղումը, ծրագրի վերաբերյալ տարածված տեղեկատվության համցանցային հղումները, էջերի նկարները: 3. Մատակարարների հետ ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման համապատասխան պայմանգրերի , հանձնման-ընդունման ակտերի առկայություն:	20.10.2021թ.	Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2021թ.	257000

		կկազակերպվի նրանց ուղևորափոխադրման, կեցության, սննդի հետ կապված մի շարք հարցեր:	5. Դասընթացի թեմաների կոնկրետացում և տրամադրվելիք նյութի պատրաստում: 6. Ծրագրի շահառուների ընտրություն:	4. Լուսանկարներ հանդիպումից, հանդիպման արձանագրություն: 5. Մասնակիցներին տրամադրվելիք ուսումնաօժանդակ նյութերի առկայություն՝ տպագրված և էլեկտրոնային տարբերակներով: 6. Հայտադիմումների հիման վրա ընտրված 25 մասնակիցների ցուցակ՝ կենսագրական-կոնտակտային տվյալներով:			
2	Ծրագրի շահառուների կարողությունների զարգացում	Լոռու մարզի Ստեփանավան համայնքում կանցկացվի 6-օրյա դասընթաց՝ երկու փուլով: Առաջին փուլի ընթացքում (օֆլայն, 3օր, 8 ժամ տևողությամբ՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ) շահառուները գիտելիքներ և հմտություններ կստանան ՀՀ ՏԻՄ օրենսդրության,	7. Դասընթացների առաջին փուլ՝ ՏԻՄ դասընթացների անցկացում: 8. Դասընթացների երկրորդ փուլ՝ մեդիա դասընթացների անցկացում: 9. Դասընթացների ամփոփում, մասնակիցների	7. ՏԻՄ դասընթացի մասնակիցների գրանցման թերթիկներ, լուսանկարներ, տեսաֆիլմ: 8. Մեդիա դասընթացի մասնակիցների գրանցման թերթիկներ, լուսանկարներ, տեսաֆիլմ: 9. Դասընթացների գնահատման	10.11.2021թ.	Համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2021թ.	1.435.200

		ՏԻՄ նոր ընտրակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և լիազորությունների, տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության կարգի, համայնքային քաղաքացիական նախաձեռնություններ կազմակերպելու վերաբերյալ: Դասընթացների երկրորդ փուլի ընթացքում (օֆլայն, 3 օր, 8 ժամ տևողությամբ՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ) շահառուները կզարգացնեն իրենց կարողությունները քաղաքացիական լրագրության, նոր մեդիայի, բլոգավարության, մեդիա բովանդակություն պատրաստելու, ճիշտ լուսանկարելու վերաբերյալ, կսովորեն բացել և վարել բլոգ blogger.com անվճար հարթակում:	գիտելիքների գնահատում, արդյունքների գնահատում, հավաստագրերի հանձնում:	25 անանուն թերթիկներ, ՏԻՄ և մեդիա դասընթացներից առաջ և հետո թեմայի վերաբերյալ մասնակիցների գիտելիքների գնահատման թերթիկներ, հավաստագրերի հանձնման լուսանկարներ:				
3	Շահառու համայնքում քաղաքացիական	Մեդիա դասընթացների ավարտին շահառուները կբացեն համայնքային	10. Բլոգների բացում և գործարկում:	10. Ծրագրի արդյունքում բացված բլոգների հղումներ (առնվազն 6 մեդիա բլոգ, որից	15.11.2021թ.	Համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի	150.000	

	լրագրության զարգացում, մեդիա բլոգների ստեղծում	նշանակության 4 բլոգներ Ստեփանավան, Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի համար: Այնուհետև կանցկացվի լրագրողական պրակտիկա. քաղաքացիական լրագրողի հմտություններ ստացած ծրագրի շահառուների հանդիպումներ կունենան Ստեփանավան համայնքի ՏԻՄ-երի և ՀՈԱԿ--ների ներկայացուցիչների հետ՝ նրանց հետ վարելով լրագրողական հարցազրույցներ համայնքային խնդիրների շուրջ, որոնց վերաբերյալ կպատրաստեն հոդվածներ, որոնք կխմբագրվեն մեդիա փորձագետի կողմից և կտեղադրվեն բլոգներում, ինչպես նաև կուղարկվեն այլ ԶԼՄ-ների:	11. Լրագրողական պրակտիկա, ՏԻՄ-երի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների հետ, լրագրողական հարցազրույցների անցկացում: 12. Շահառուների կողմից լրագրողական հոդվածների հոդվածների պատրաստում և տեղադրում բլոգներում, այլ կայքերում: 13. Բլոգավարության վերաբերյալ առցանց խորհրդատվությունների անցկացում:	4-ը՝ համայնքային նշանակության): 11. Լուսանկարներ հանդիպումներից, ՏԻՄ-երի հետ անցկացված հարցազրույցների արձանագրություններ, ձայնագրություններ, տեսաֆիլմ: 12. Շահառուների կողմից պատրաստված հոդվածների հողումներ (առնվազն 10 հոդված): 13. Լուսանկարներ առցանց հանդիպումներից:		հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2021թ.	
4	*Համայնքային երիտասարդական ակտիվ խմբի/ համայնքի ղեկավարին կից հասարակակ*	*Դասընթացների ավարտին կկազմավորվի համայնքային երիտասարդական ակտիվ խումբ՝ ներառելով համայնքի բոլոր* բնակավայրերից: Կներկայացվի գրավոր առաջարկություն ՏԻՄ-ին՝ ստեղծելու	*14. Համայնքային երիտասարդական խմբի կազմավորում:* ղեկավարին կից երիտասարդական խորհուրդ ստեղծելու առաջարկով ՏԻՄ-	*14. Համայնքային երիտասարդական խմբի անդամների ցուցակ՝ կենսագրական և տվյալներով:* 15. Համայնքի ՏԻՄ-ին՝ համայնքի ղեկավարին	*30.11.2021թ.*	*Համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի ունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2021թ.*	*150.000*

	ան կարգով գործող երիտասարդական խմբի ստեղծում	համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող երիտասարդական խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից ընտրված երիտասարդ ներկայացուցիչներ, որոնց թվում նաև՝ սույն ծրագրի շրջանակում ՏԻՄ-ի գործունեության վերաբերյալ համապատասխան կարողություններ և գիտելիքներ ստացած երիտասարդները: Այնուհետև երիտասարդական համայնքային խմբին կտրամադրվի մենթորական աջակցություն՝ համայնքնային կարիքները գնահատելու, համայնքային խնդրիների լուծման համար ֆոնդհայթայթում իրականացնելու, համայնքային-քաղաքացիական նախաձեռնություններ կազմակերպելու, համայնքի ավագանու նիստերին առաջարկություններով հանդես գալու համար:	ին դիմումի ներկայացում: 16. Համայնքային երիտասարդական խմբին/համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդին խորհրդատվության և մենթորական աջակցության տրամադրում՝ համայնքային կարիքները գնահատելու և գերակա խնդիրը որոշելու նպատակով, համայնքային քաղաքացիական նախաձեռնություն կազմակերպելու նպատակով:	կից երիտասարդական խորհուրդ ստեղծելու վերաբերյալ գրավոր առաջարկի առկայություն: 16. Լուսանկարներ խորհրդատվություններից և համայնքային խնդիրների վերաբերյալ քննարկումներից, բացահայտված համայնքային առաջնահերթ լուծման խնդրի ընտրության արձանագրության քաղվածքը, ընտրված խնդիրի ներկայացում համայնքային-քաղաքացիական նախաձեռնության փաստաթղթային փաթեթում:				
5	Ծրագր	**Ծրագրի ավարտին** կկատարվի ծրագրի	17. Ծրագրի գնահատում:	17. Ծրագրի շահառուների		Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ-ի	257.000	

ի գնահատում և ամփոփում	արդյունքների գնահատում և ծրագրի ամփոփում: Գնահատման ոչ-ֆորմալ(բանավոր) և ֆորմալ(հատուկ մշակված անանուն հարցաթերթիկ) մեթոդների համադրմամբ կգնահատվի ծրագրի տեխնիկական, բովանդակային կողմերը, արդյունավետությունը և շարունակականությունը: Թեմայի վերաբերյալ մասնակիցների գիտելիքները ստուգելու նպատակով կկատարվի գիտելիքների նախնական և վերջնական գնահատում: Ծրագրի գնահատման չափանիշ է համարվելու նաև այն հանգամանքը, թե քանի մասնակից է գործնականում կարողանում բացել և վարել բլոգ:Ծրագրի ավարտին կկատարվի ծրագրի վերջնական գնահատում, կկազմվեն նկարագրական ու ֆինանսական հաշվետվությունները և կներկայացվեն ՀՀ կրթության, գիտության,	18. Ծրագրի վերաբերյալ տեսաֆիլմիպատրաստում: 19. Ծրագրի լուսաբանում և տեսանելիության մոնիթորինգ: 20. Ծրագրի արդյունքների վերջնական գնահատում և ամփոփում, պատմողական ու ֆինասնական հաշվետվությունների պատրաստում և հանձնում ԿԳՄՍՆ:	կողմից լրացված 25 անանուն գնահատման թերթիկներ, ծրագրի վերաբերյալ տեսաֆիլմում ներառված հարցազրույցներ, համացանցում առկա գրառումներ, մեկնաբանություններ: 18. 15-20 րոպե տևողությամբ տեղեկատվական-ուսուցողական բնույթի տեսաֆիլմի առկայություն, մատակարարի հետ կնքված համապատասխան պայմանագիր և հանձնման ընդունման ակտ: 19. Ծրագրի վերաբերյալ հոդվածների, համացանցային գրառումների, տեսանյութերի հղումների, ծրագրի տեսանելիությունը ներկայացնող էջերի ուսումնասիրություն և լուսանկարներ (Prt.Scr): 20. **Ծրագրի պատմողական հաշվետվություն** կից	10.11.2021թ.	կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2021թ.	

		մշակույթի և սպորտի նախարարություն:		հավելվածներով՝ 1 տեսաֆիլմ, լուսանկարների սկավառակ (առնվազն 120 լուսանկար), ծրագրի գնահատման 25 անանուն հարցաթերթիկներ, դասընթացի մասնակցության թերթիկներ, համայնքային ակտիվ ղ երիտասարդակա ն խմբի անդամների ցուցակ, գրավոր առաջարկություն ՏԻՄ-ին՝ համայնքի ղեկավարին կից երիտասարդակա ն խորհուրդ ստեղծելու վերաբերյալ, համայնքային նշանակության գերակա խնդրի վերաբերյալ համայնքային-քաղաքացիական նախաձեռնության փաստաթղթային փաթեթի առկայություն : **Ծրագրի ֆինանսական հաշվետվություն** կից հավելվածներով՝ ծրագրի աշխատակազմի, ձեռք բերված ապրանքների ու [illegible] ի հետ կնքված պայմանագրեր,			

				հանձնման-ընդունման ակտեր, հաշիվ ապրանքագրեր, փոխանցման կտրոններ:			
	Ընդամենը 2.249.200						
	ԱԱՀ՝	449.840					
	Ընդամեն՝	2.699.040					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀԿՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
Էլ. փոստ՝ kamqlori@gmail.com
բանկ ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
մ/ճ հասցե՝ ք.Ստեփանավան,Սոս Սարգսյան 26
Հ/Հ 2471401976060000, ՀԿՀՀ06950266
Կատարողի ստորագրությունը
ՀԿ –ի ծրագրերը համակարգող՝
Պետրոս Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
21.10.2021 ԵՔԴՄ- 14 ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
Ծրագրի անուն՝ «Երիտասարդների հզորացում՝ հանուն Ստեփանավանում լավ տեղական ինքնակառավարման»

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր * Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ						
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	100000	200000		200000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	2	85000	170000		170000
1.3	Հաշվապահ	ամիս	2	72000	144000		144000
Ընդամենը Ա					514000	514000	
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1	Դասընթացների ճաշի ընդմիջում	Անձ x օր	28x6=168	3000	504000		504000
2.2	Դասընթացների տրճի ընդմիջում	անձ x օր	28x(6x2)=336	1450	487200		487200
2.3	Ծրագրի շահառուների ուղևորափոխադրում Ստեփանավան խոշորացված համայնքի բնակավայրերից Ստեփանավան և հակառակ ուղղությամբ 10-15 տեղանոց մարդատար տրանսպորտային միջոցով՝ ներառյալ հարկեր	անգամ	2 անգամ x 6օր =12	12000	144000		144000
2.4	Գրենական պիտույքների փաթեթ	հատ	30	2000		60000	60000
2.5	Տեղեկատվական կրիչներ շահառուների համար	հատ	25	4500		112500	112500
2.6	ՏԻՄ փորձագետ	ամիս	2	150000	300000		300000
2.7	Մեդիա փորձագետ	ամիս	2	150000	300000		300000
2.8	Ծրագրի ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում	հատ	1			510000	510000

2.9	Ծրագրի ընթացքի լուսանկարահանում՝ ներառյալ լուսանկարների մշակում	հատ	1	240000		240000	240000
Ընդամենը Բ					1735200	2657700	
Ընդամենը Դ					2249200	922500	3171700
Ընդամենը					449840		
ԱԱՀ					2699040		
ԸՆԴԱՄԵՆԸ							

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Ծրագրի ղեկավար	200000	Ծրագրի մշակում, իրականացում, ընթացիկ գնահատում, ռիսկերի կառավարում, մոնիթորինգ, տվյալների հավաքագրում՝ 2ամիս×100.000 ՀՀԴ =200.000ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
1.2	Ծրագրի համակարգող	170000	Ծրագրի ադմինիստրատիվ, կազմակերպչական հարցերի կարգավորում՝ 2 ամիս × 85.000ՀՀԴ= 170.000ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
1.3	Ծրագրի հաշվապահ	144000	Ծրագրի հաշվապահություն և ֆինանսական հաշվետվության կազմում՝ 2 ամիս ×72.000ՀՀԴ=144.000ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
	Ծրագրային ծախսեր		
2.1	Դասընթացների ճաշի ընդմիջում	504000	Ստեփանավանում ՀԿ-ի նախանշած ճաշացանկով 1 անձի համար ճաշի ընդմիջման եվազգույն գինը՝3000ՀՀԴ×28անձ(25մասնակից+1ուսուցանող-փորձագետ+1ծր.ղեկ.+1ծր.ադմ.համակարգող)×6անգամ (6օր, օրական 1անգամ)=504.000ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
2.2	Դասընթացների սուրճի ընդմիջում	487200	Ստեփանավանում ՀԿ-ի նախանշած պահանջներով 1 անձի սուրճի ընդմիջման ծառ. նվազագույն գինը՝1450ՀՀԴ×28անձ(25մասնակից+ 1 ուսուցանող-փորձագետ+1ծր.ղեկ.+1ծր.ադմ.համակարգող)×12անգ(6օր, օրական 2անգամ)=487.200ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
2.3	Ծրագրի շահառուների ուղեորափոխադրում Ստեփանավան խոշորացված համայնքի բնակավայրերից Ստեփանավան և հակառակ ուղղությամբ 10-15 տեղանոց մարդատար տրանսպորտային միջոցով	144000	Ստեփանավան քաղաքից Արմանիս, Ուրասար, Կողես բնակավայրեր 10-15 տեղանոց մարդատար տրանսպորտային միջոցով ուղեորափոխադրման գինը 12.000 ՀՀԴ՝ ներառյալ հարկերը: 6 օր x 2անգամ x 12000 ՀՀԴ =144000 ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
2.6	ՏԻՄ փորձագետ	300000	Ծրագրի ՏԻՄ ոլորտի փորձագիտական աշխատանքներ, շահառուներին ՏԻՄ օրենսդրության, ՏԻՄ գործառույթների, մասնակցային կառավարման,

			քաղաքացիական նախաձեռնությունների, ֆոնդհայթայթման վերաբերյալ գիտելիքների փոխանցում, խորհրդատվություններ... 2 ամիս x 150000 = 300000 ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
2.7	Մեդիա փորձագետ	300000	Ծրագրի մեդիա ոլորտի փորձագիտական աշխատանքներ, շահառուներին նոր մեդիայի, քաղաքացիական լրագրության, բլոգավարության, հարցազրույց վարելու, հոդված պատրաստելու, ճիշտ լուսանկարելու վերաբերյալ գիտելիքների փոխանցում, խորհրդատվություններ, լրագրողական պրակտիկայի համակարգում, հոդվածների խմբագրում, բլոգերի գործունեության համակարգում 2 ամիս x 150000 = 300000 ՀՀԴ /ՀՀ բյուջեից/
Ընդամենը		2249200	
ԱԱՀ		449840	
ԸՆԴԱՄԵՆԸ		2699040	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
Էլ. փոստ՝ kamqlori@gmail.com
Բանկ ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
մ/ճ հասցե՝ ք.Ստեփանավան,Սոս Սարգսյան 26
Հ/Հ 2471401976060000, ՀՎՀՀ06950266
Կատարողի ստորագրությունը
ՀԿ –ի ծրագրերը համակարգող՝
Պետրոս Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.